ԼԱՆԿ-ԹԱՄՈՒՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Դ. Ե. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Լանկ-Թամուրի նվաճումների, նրա ստեղծած հսկայածավալ պետության, Միջին Ասիայի, Եվրոպայի և Ասիայի ժողովուրդների կյանքում նրա ունեցած դերի վերաբերյալ սկզբնաղբյուրներում և պատմական գրականության մեջ կան իրարամերժ, հակասական տեղեկություններ ու կարծիքներ։ Աղբյուրների այն մասը, որոնք գրվել են Թամուրի և նրա ժառանգների պալատական միջավայրում, իդեալականացնում են նրա գործունեությունն ընդհանրապես։ Այս կարգի սկզբնաղբյուրներից են Նիզամ ադ-դին Շամիի, Շերեֆ ադ-դին Եզդիի, Մուին ադ-դին Նատանզիի, Հաֆեզ Աբրուիի, Աբդու ար-Ռեզակ Սամարղանդի, Միրխոնդի և այլոց պատմական երկերը։ Նշված հեղինակները Լանկ-Թամուրին բնութագրել են որպես խիզախ, խելացի և խորաթափանց պետական ու ռազմական գործիչ, իսկ կրած անհաջողությունների համար մեղադրել են նրա մերձավոր զինակիցներին։

Լանկ-Թամուրի պալատական միջավայրի պատմիչները արդարացնում են նրա ամենասոսկալի և չհիմնավորված դաժանությունները։

Նրա ծանր հարկային քաղաքականության դեմ 1377 թ. ապստամբած Սպահան քաղաքի և նրա շրջակայքի 70 հազար բնակչության ոչնչացումն ու նրանց կտրած գլուխներից բուրգերի կառուցումը, իսկ Հնդկաստանում 100 հազար գերի հնդիկների ոչնչացումն արդարացվում են Եզդիի կողմից[1]։

Աղբյուրների այն խումբը, որոնք գրվել են այլ երկրներում, Լանկ-Թամուրի գործունեության խնդրում ցուցաբերել են օբյեկտիվ մոտեցում։ Այս խմբի սկզբնաղբյուրներից են Լանկ-Թամուրի մոտ Կաստիլիայի թագավորի բանագնաց Կլավիխոյի, Խալլ Կոնդիլեսի, Իբն Արաբշահի և այլոց պատմական երկերը, վրացական և ռուսական ժամանակագրություններն ու տարեգրությունները։

Միանգամայն իրավացի է ռուս նշանավոր արևելագետ Ա. Պ. Նովոսելցևը, երբ գրում է. «Շամին կամ Եզդին մեզ թողել են այն, ինչը որ ցանկացել են գալիք սերունդներին հասցնել Թամուրը և նրա հետնորդները, իսկ Իբն Արաբշահի խիստ արդարացի գնահատականը համազոր է հայկական, ռուսական և այլ տարեգրությունների ու ժամանակագրությունների գնահատականին, որոնց երկրները տեսել են սարսափելի դառնություններ և ծանր հարված են կրել»[2]։

Թամուրի և նրա ժամանակաշրջանի պատմագիրներին հետևող մուսուլման պատմագիրները և հետագա հետազոտող պատմաբաններից ոմանք, Լանկ-Թամուրի ու նրա ժամանակաշրջանի վերաբերյալ եղած աղբյուրների և ոչ ամբողջական և կողմնակալ օգտագործման հետևանքով չեն կարողացել համակողմանի բնութագրել Լանկ-Թամուրի գործունեությունը։ Ամենևին չժխտելով Լանկ-Թամուրի ունեցած մեծ ծառայությունները, Մավերանահրի տնտեսական ու մշակութային կյանքում, սակայն, պետք է ընդգծենք, որ այդ ժամանակավոր վերելքը տեղի է ունեցել նվաճված երկրները կողոպտելու և դաժանորեն շահագործելու հաշվին՝ կործանիչ հարված հասցնելով այդ երկրների տնտեսական և մշակութային կյանքին։ Հետևապես Լանկ-Թամուրի

---

[1] А. Якубовский, Темур (Вопросы истории, 1946, № 8—9, с. 44).

[2] А. П. Новосельцев, Об исторической оценке Темура (Вопросы истории, 1973, № 2, с. 4).

գործունեությունը համակողմանի լուսաբանելու համար անհրաժեշտ է օգտագործել հայկական, վրացական և արաբական աղբյուրները, որոնք չեն օգտագործել Բարտոլդի, Յակուբովսկու և Մումինովի աշխատություններում[3]։

Յակուբովսկին չթաքցնելով իր համակրանքը Լանկ-Թամուրի նկատմամբ, նրան բնութագրել է իբրև հաշվենկատ տնտեսվար, որն իր պետության կենտրոնն էր տանում պատերազմական ավարն ու թանկարժեք իրերը[4]։

Միջին Ասիայի, Հնդկաստանի, Անդրկովկասի, Փոքր Ասիայի, Արաբական երկրների քաղաքներն ու գյուղերը նվաճող ու հրկիզող Լանկ-Թամուրին ուզբեկ պատմաբան Մումինովը բնութագրում է որպես պատվի, ազնվության նախանձախնդիր, պետականորեն մտածող, մեծ կառուցող, մշակույթը գնահատող, Միջին Ասիայի ժողովուրդների կողմից հարգված ու մեծարված մի անհատականություն[5]։ Սակայն Մումինովը մոռանում է, որ Լանկ-Թամուրը 1380 թ. կրկին արշավեց Խորեզմի վրա, գրավեց Ուրգենշը և հրամայեց մշակութային այս նշանավոր քաղաքը, ուր բարձր զարգացման էր հասել նաև տնտեսությունը, հողին հավասարեցնել և տեղը գարի ցանել[6], նույն նվաճողը Հնդկաստանում 1398—1399 թթ. արշավանքի ժամանակ, ճակատամարտից առաջ կոտորել տվեց 100 հազար հնդիկ գերիների, որոնք իբր պատրաստվում էին ապստամբել նրա դեմ[7]։

Նովոսելցևը քննադատելով Լանկ-Թամուրի ժամանակաշրջանի պատմությամբ զբաղվող հեղինակներին, խիստ կարևորում է հայկական, վրացական և արաբական աղբյուրների օգտագործումը, քանի որ նրանք ոչ միայն հետաքրքիր փաստեր են պարունակում դեպի Անդրկովկաս ու Արաբական երկրներ Լանկ-Թամուրի կատարած արշավանքների մասին, այլև այդ շրջանի միջազգային հարաբերությունների և իր՝ նվաճողի, գործունեության վերաբերյալ հաղորդում են հետաքրքիր ու բնորոշ փաստեր[8]։

Հայկական և այլ լեզու աղբյուրների նյութի հիման վրա փորձենք տալ Հայաստանում Լանկ-Թամուրի գործադրած բարբարոսությունների համառոտ պատմությունը և փաստացի լուսաբանել նրա մահասփյուռ գործունեության արդյունքները։ Իր առաջին արշավանքի ժամանակ՝ 1386—1387 թթ. Լանկ-Թամուրը նվաճեց Արարատյան դաշտը և նրա հարակից շրջանները, ապա նկրխուժեց Վրաստան, նվաճեց Արևելյան Վրաստանը, կողոպտեց քաղաքներն ու գյուղերը, տասնյակ հազարավոր գերիներով, որոնց մեջ էին վրաց Բագրատ Թագավորը։ 1386 թ. նոյեմբերին գնաց Մուղան՝ ձմեռելու։ Իսկ 1387 թ. գարնանը Լանկ-Թամուրը նվաճում է Արևելյան Հայաստանի մնացած շրջանները, ապա անցնելով Արաքսը, ասպատակում է Հարավային և Արևմտյան Հայաստանը։ Ականատես հեղինակ Թ. Մեծոփեցու վկայությամբ այդ արշավանքի հետևանքով Հայաստանի բարեշեն գավառները անմարդաբնակ դարձան[10]։ XV դ. հեղինակ Դր. Խլաթեցին իր «Ցիշատակարան աղեցից» պատմական վիպասանությունում նկարագրելով Լանկ-Թամուրի արշավանքը, վկայում է, որ Կապույտ բերդը, Երևանը և այլ վայրերը գրավելիս սպանել է հազարավոր մարդկանց։ Այն արշավանքի ամենաբարբարոսական արարը եղավ Վանի գրավումը։ Վանի բերդը գրավելուց հետո, Թ. Մեծոփեցու վկայությամբ, նա հրամայում է

---

[3] В. В. Бартольд, Соч., т. 2, ч. I, М., 1963, т. 5, М., 1968; Муминов, Роль и место Амира Тимура в истории Средней Азии, Ташкент, 1968.

[4] А. Якубовский, նշվ. աշխ. էջ 72։

[5] Муминов, նշվ. աշխ., էջ 11, 12, 22, 45։

[6] А. Якубовский, նշվ. աշխ., էջ 62—63։

[7] Նույն տեղում, էջ 66։

[8] А. П. Якубовский, նշվ. աշխ., էջ 1։

[9] Թ. Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 19։ Մաղ ժամանակագրություններ, կազմեց Վ. Հակոբյան, հ. 2, Երևան, 1956, էջ 350։

[10] Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 19։

տղամարդկանց բերդից ներքև գցել, իսկ կանանց ու երեխաներին գերի տանել[11]։

Սամուել Անեցու «Ժամանակագրության» շարունակողի վկայությամբ Վանի բերդից անդունդ է գցվել 7 հազար մարդ[12]։

Վանեցի Կարապետ գրիչի վկայությամբ Հայաստանի ամրոցները դրավելուց հետո դաժանորեն սպանեցին տղամարդկանց, բռնաբարեցին կանանց, երեխաներին տրորեցին ձիերի սմբակներով այնպես, որ ջորենի փոխարեն վտակներ էին հոսում, իսկ հարդի փոխարեն գետինը ծածկվեց փշրված ոսկորներով[13]։

Երկրորդ անգամ Լանկ-Թամուրը Հայաստան արշավեց 1394 թ.։ Նա դուրս գալով Միջագետքից Ամիդի և Սասունի վրայով ներխուժում է Մշո դաշտ, այնուհետև գրավում է Երզնկան, Կարինը, Ավնիկը, Կարսը, նորից գրավում է Ճակատքը, ապա ասպատակում է Արարատյան դաշտը։ Իր ավերասփյուռ ճանապարհին Լանկ-Թամուրը կոտորել տվեց բազմաթիվ մարդկանց և կողոպտեց գրաված քաղաքների հարստությունը։ Թ. Մեծոփեցու վկայությամբ միայն Ծոփքում Լանկ-Թամուրը ավերել է 50 գյուղ, կոտորել է հազարավոր մարդկանց[14]։ Կլավիխոյի վկայությամբ չնայած Երզնկայի Թահերթեն իշխանը հնազանդություն հայտնեց Լանկ-Թամուրին, սակայն նա կողոպտում և ավերում է Երզնկան[15]։ Դաժան ու առավել անողորմ վերաբերվեց Լանկ-Թամուրն իրեն դիմադրած Կարս քաղաքի նկատմամբ։ Թ. Մեծոփեցու վկայությամբ նա ավերում է Կարսի բերդը, իսկ բնակչությանը սրի քաշում[16]։

Երրորդ անգամ Լանկ-Թամուրը Անդրկովկասում հայտնվեց 1399 թ.։ Նրա այս արշավանքը ուղղված էր Վրաստանի դեմ։ Նա Վրաստան մտավ 1399 թ. նոյեմբերին և իր արշավանքը ավարտեց 1400 թ. հունիսին։ Ժամանակի հայ գրիչները խիստ ճշգրիտ տեղեկություններ են հաղորդում Վրաստանում գործադրած Լանկ-Թամուրի բարբարոսությունների մասին։

Ինչպես վկայում են Սամուել Անեցու «Ժամանակագրության» շարունակողը և Իբն Արաբշահը, Լանկ-Թամուրի բանակը ավերում ու կողոպտում է Վրաստանը, սրի քաշում ու գերում հազարավոր մարդկանց[17]։ Տաթևացի Սարգիս գրիչը 1401 թ. գրած ձեռագրի հիշատակարանում հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Վրաստանում Լանկ-Թամուրի գործած բարբարոսությունների մասին. «Եւ յանցեալ ամի... իշխանն անօրէն, որդին կորստեան, որ յազգէ խորազմին՝ Թամուբ-Լանկ անուանեալ, որ զաշխարհս Հայոց երիցս անգամ կործանեալ էր, եկն կրկին բազում և անթիւ զօրօք և էառ զաշխարհն Վրաց, ... և զամենեսեան առհասարակ ի սուր և ի գերութիւն վարեաց, թուով՝ ՃՌ (100000)-աւ գրեցաւ զկորուստն, և զեկեղեցիս քարահատակ կործանեաց»[18]։ Իսկ Գրիգոր Խլաթեցի հիշատակագիրը 1400 թ. խառապատա վանքում գրել է, որ Լանկ-Թամուրի արշավանքը Վրաստան տևել է 7 ամիս, որի ժամանակ նա գրավել է բազմաթիվ ամրոցներ, կոտորել գրեթե բոլոր տղամարդկանց, իսկ անթիվ անհամար կանանց ու երեխաների գերի տարել[19]։

---

11 Նույն տեղում, էջ 30—31։

12 Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի դրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 171։

13 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 379։

14 Թ. Մ ե ծ ո փ ե ց ի, նշվ. աշխ., էջ 45։

15 Հ. Հ ա կ ո բ յ ա ն, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1933, էջ 96։

16 Թ. Մ ե ծ ո փ ե ց ի, նշվ. աշխ., էջ 45։

17 Ս ա մ ո ւ է լ Ա ն ե ց ի, նշվ. աշխ., էջ 171, Ի բ ն Ա ր ա բ շ ա հ, Պատմութիւն Լենկ Թիմուրայ, Երուսաղեմ, 1873, էջ 98—99։

18 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 5։

19 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 628։

Վրաստանում կոտորված ու գերված մարդկանց մեջ մեծ թիվ էին կազմում հայերը։

Վրաստանից Լանկ-Թամուրը մեծաթիվ զորքով եկավ Ավնիկ, իսկ այստեղից Կարին--Երզնկա-Սեբաստիա ուղերթով արշավեց Թուրքական սուլթան Բայազետ I-ի դեմ։ Սեբաստիայում հանդիպելով դիմադրության, Լանկ-Թամուրը պահանջում է քաղաքի պաշտպաններից դադարեցնել դիմադրությունը՝ խոստանալով ազատություն։ Սեբաստիայի պաշտպանները ընդունում են Լանկ-Թամուրի առաջարկը և զենքը վայր դնում, սակայն անողորմ նվաճողը քաղաքի պաշտպաններից 3 հազար մարդու կենդանի թաղել է տալիս պարիսպների մոտ փորված փոսերում և նրանց ծածկում է հողով ու ջրով[20]։ Սեբաստիան պաշտպանող զորքի մեջ մեծ թիվ էին կազմում հայերը, հեծելազորում կար 4000 հայ, որոնցից շուրջ 3000-ը կենդանի թաղվեց Սեբաստիայի պարիսպների մոտ։ Իսկ քաղաքի հրապարակում նա արյունոտ սպանդ է կազմակերպում անպաշտպան բնակչության նկատմամբ։ Այդ տեսարանը նկարագրել է Խալկ Կոնդիլեսը. «...առաջին հերթին սրի քաշվեցին բոլոր տղամարդիկ, այնուհետև հավաքելով կանանց ու երեխաներին մի մեծ հրապարակի վրա (Թամուրը) նրանց վրա բաց թողեց իր հեծելազորը, որը մի անողորմ կոտորած սարքեց, սպանելով մինչև վերջին մարդը։ Ահա այս տարաբախտ քաղաքի վախճանը, քանզի և ոչ մի կենդանի էակ չճողոպրեց սրից»[21]։ Խալկ Կոնդիլեսի վկայությամբ, Սեբաստիան այդ ժամանակ ունեցել է շուրջ 100 հազար բնակչություն, որի մեծ մասը հայեր էին[22]։

Սուլթան Բայազետ 1-ին ճակատամարտ տալուց առաջ Լանկ-Թամուրը արշավել է դեպի Կիլիկիա, Ասորիք և Միջագետք, հատկապես մեծ ավերածություն, կոտորած ու կողոպուտ կազմակերպել Հալեպ և Դամասկոս քաղաքներում, հրամայել է հրդեհել Դամասկոսը[23]։ Լանկ-Թամուրը Միջագետքում ևս, հատկապես Մերդին և Բաղդադ քաղաքներում արյունոտ նախճիր կազմակերպեց, իսկ 1401 թ. նոյեմբերին վերադարձավ Ղարաբաղ՝ ձմեռելու[24]։

Լանկ-Թամուրի հեռանալուց հետո սուլթան Բայազետ I-ը նորից գրավում է Մալաթիա, Սեբաստիա և Երզնկա քաղաքները։ Իմանալով այդ մասին, Լանկ-Թամուրը 1402 թ. գարնանը արշավանքի դուրս եկավ նրա դեմ։ Արշավանքի մահասփյուռ ուղին անցնում էր Հայաստանով՝ հյուսիս-հարավ։ 1402 թ. հուլիսի 20-ին Անկարայի մոտ ճակատամարտում Լանկ-Թամուրը ջախջախում է Բայազետի ուժերին և գերում նրան։ Ասպատակելով Փոքր Ասիան, մեծ ավարով և բազմաթիվ գերիներով 1403 թ. նա վերադառնում է Մուղան։ Թ. Մեծոփեցին հաղորդում է, որ Լանկ-Թամուրը գերի տարավ 60 հազար տուն[25]։

Լանկ-Թամուրի շուրջ 20 տարիների աշխարհավեր ու մահասփյուռ արշավանքները, ինչպես աներկբայորեն վկայում են փաստերը, խիստ ծանր հետևանքներ ունեցան նվաճված երկրների համար։

Աղբյուրներում բազմաթիվ վկայություններ կան հայ ժողովրդի նկատմամբ Լանկ-Թամուրի գործած դաժանությունների վերաբերյալ։ Սպատակեր անապատում Որդի Ալեքսանի գրիչը 1388 թ. գրած ձեռագիր հիշատակարանում գրել է. «...զոմանս գերեաց, և զոմանս գահավիժեաց, և զայս ի սուր սուսերի մաշեաց և զերկիրն հրով ճարակեաց»[26]։ Տիրացու կրոնա-

---

20 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 3, Իրն Արարշահ, նշվ. աշխ., էջ 110։

21 Մ. Ջուլալյան, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների XII—XVIII դդ., գիրք Ա, Երևան, 1990, էջ 90։

22 Նույն տեղում, էջ 89։

23 Իրն Արարշահ, նշվ. աշխ., էջ 146։

24 В. Г. Тизенгаузен, Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, т. 2. М—Л, 1941, с. 188.

25 Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 66։

26 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 573։

վորը Լանկ-Թամուրին համեմատում է Նեռի հետ[27]։ Լանկ-Թամուրի՝ Հայաստանում գործած բարբարոսությունների մասին Կարապետ գրիչը 1389 թ. գրել է. «...զտղայնս առութիւր ձիոց առնէին, զկանայսն խայտառակէին, զմանկունս նոցին դերի վարէին, իբրև զկալ կամնասայլից զտղայսն ձիովք կասէին, և փոխան ցորենոյ արիւնս զետոց բղխէին և փոխանակ յարդի զոսկերս իբրև զփոշի յերկիր հոսէին»[28]։ Գրիչ Թուման Վանեցին 1391 թ. գրել է, որ 4 տարի է ինչ իրենք բոլորը քաղցած ու անօթևան ապաստանել են լեռների կատարներին և չնայած կենդանի են, սակայն մեռած են Թամուրի ահից[29]։ Թովմա Մեծոփեցին գերվածների ծանր վիճակի մասին վկայել է հետևյալը. Նրանց հետ վարվում էին անգթորեն, օրերով քշում էին սոված, մերկ ու բոբիկ, իսկ ովքեր գործադրած բարբարոսություններից ուժասպառ ընկնում էին գետին, տեղն ու տեղը քարերով ջարդում էին նրանց գլուխները[30]։

Հայ և օտարալեզու ժամանակի աղբյուրներում բազմահազար վկայություններ կան Լանկ-Թամուրի չարագործությունների մասին։

Վ. Խարտոլդը գրում է. «Թամուրը իր գազանություններով գերազանցել է Չինգիզ խանին»[31]։

Գաստերի անկողմնակալ ու սթափ վերլուծության դեպքում մեր առջև հառնում է ասպատակող, ավերող, սպանող ու գերեվարող Լանկ-Թամուրը, որի արյունածոր արշավանքները ողբերգական հետևանքներ ունեցան Միջին Ասիայի, Իրանի, Միջագետքի, Փոքր Ասիայի և Անդրկովկասի ժողովուրդների համար։ Հետևապես նրան արդարացնելու փորձերը հիմնազուրկ են և հակասում են պատմական ճշմարտությանը։

К ВОПРОСУ ОБ ОЦЕНКЕ ТАМЕРЛАНА

Г. Е. КИРАКОСЯН

Резюме

В исторической литературе содержатся взаимоисключающие сведения о Тамерлане, его походах и созданном им огромном государстве.

Источники, написанные в дворцовой среде, как самим Тамерланом, так и его последователями, положительно оценивают его деятельность и восхваляют варварства в отношении народов покоренных стран.

О походах и деятельности Тамерлана объективные сведения можно почерпнуть из арабских, грузинских и армянских источников, а также у европейских путешественников.

---

27 Նույն տեղում, էջ 574։

28 Նույն տեղում։

29 Նույն տեղում։

30 Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 67։

31 В. В. Бартольд, նշվ. աշխ., էջ 746։